



ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՎԱՅԱՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ԴԵՐԵՆԻԿ ԳԷՆՑ. ԳՈՂՏՐԱԼԵԱՆ, ԼՊՎԻԼ

ST. KEVORK ARMENIAN APOSTOLIC CHURCH

REV. FR. TERENIG KONDRALIAN, PASTOR

3211 SYNOTT ROAD • HOUSTON, TEXAS 77082 • TELEPHONE 713/497-5345 OR 497-5362

March 9, 1983

Qerashnorh
Archbishop Torkom Manoogian, Primate
Diocese of the Armenian Church of America
630 Second Avenue
New York, New York 10016

Srbazan Hayr,

On Easter Sunday, April 3, 1983, the Parish Council of St. Kevork Armenian Apostolic Church in cooperation with the Women's Guild have planned to hold a testimonial dinner in honor of Mr. Harry Bodour of Fort Worth, Texas.

Mr. Bodour is 87 years old and has lived most of his life between Houston and Fort Worth. As early as the 1940's, Mr. Bodour worked with many Armenian individuals to establish an Armenian Church and Community Center here in Houston. From the time the plans for the construction of the church were finalized, Mr. Bodour has continuously offered his generous financial support. To this date Mr. Bodour has contributed in excess of \$50,000. He sincerely believes in the establishment of an Armenian School and has encouraged us in all our efforts. He continues to promise more assistance in the years to come.

Mr. Bodour is well known as a benefactor and philanthropist on the West Coast where he has actively helped and supported many Armenian Churches and Armenian Schools. Presently he is the driving force behind the move to establish an Armenian Church in Fort Worth.

Along with the Parish Council and the entire congregation of St. Kevork Armenian Church of Houston, I believe that Mr. Harry Bodour is most worthy of this honor and we request from your Eminence and the Diocese of the Armenian Church in America an award for appreciation of all he has done as benefactor to the Armenian Church and the Armenian School.

Kindly let us hear from you as soon as possible so that we may make our plans for this dinner. Thank you.

Sincerely,

Rev. Fr. Terenig Kondralian
Pastor



ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆ

TEKEYAN CULTURAL ASSOCIATION

NEW YORK/NEW JERSEY CHAPTER

114 EAST 27TH STREET

NEW YORK, N.Y. 10016

Մարտ 2, 1983

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Արք Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Ինչպէս գիտէք, այս տարի, Թէքէեան Մշակութային Միութեան Իններորդ Տարեկան Պատգամաւորական Ժողովը կը գումարուի Նիւ Եորքի Ռուզվելթ Պանդոկին մէջ, Մայիս 20, 21 եւ 22ին: Նախապէս դրկուած նամակով մը խնդրած էինք որ Մայիս 21, Շաբաթ օր երեկոյեան տեղի ունենալիք Գանդիսաւոր Ճաշկերոյթ-պարահանդէսը հովանաւորէիք: Վստահ ենք թէ պիտի կարենաք ներկայ գտնուիլ, ինչպէս անցեալին, եւ ձեր հայրական խօսքով քաջալերէք Միութեանս անդամներուն կատարած ազգային մշակութային գործունէութիւնը:

Այս առթիւ, նաեւ կը խնդրենք որ մեր Պատգամաւորականին առնչութեամբ հրատարակուելիք բովանդակակից յայտագիր-գրքոյկին յղէք առաջնորդական Ձեր պատգամը: Ենորհապարտ պիտի ըլլանք եթէ Ձեր խօսքը ըլլայ Հայերէն լեզուով:


Ձեզ Մայիսի Պատգամաւորական մեր ժողովին տեսնելու ջերմ քաղձանքով,

Ի Դիմաց

Թէքէեան Մշակութային Միութեան
Նիւ Եորքի Մասնաճիւղի



Արա Պապայեան
Ատենապետ



Ս.ՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

the VERY REV. ZAVEN ARZOUManian, pastor

Մարտ 9, 1983

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան,
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի

նիւ Եորթ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ձեր համայնքիս տալիք յառաջիկայ Ծաղկազարդին այցելութեան երջանիկ առիթով իմ խնդրանքն ու յանձնարարականն է որ մասնաւոր գնահատանքի արժանի ընէք մեր նուիրուած ու հաւատարիմ Կարապետ Սրկ. Ունճեանը, իր քսան տարիներու անսակարկ եւ օրինակելի ծառայութեանը համար ի Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ:

Կարապետ սարկաւազ, իմ յիշողութեամբն ու դատողութեամբ, առաջին ամերիկածին հայն է որ սարկաւազի բարձր աստիճանին հասած է իր երիտասարդ տարիքին: Այժմ 62 տարեկան, Կարապետ Ունճեան սարկաւազ ձեռնադրուած է 1961 Ապրիլին Թրոյի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ ձեռամբ Առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Արք.ի: Ծնած է Ֆիլատելֆիա, ապա ժամանակ մը փոխադրուած Թրոյ, եւ ձեռնադրութենէն կարճ ժամանակ մը ետք վերահաստատուած Ֆիլատելֆիա, ուր քսան տարիներ է ի վեր կը ծառայէ օրինակելի բժախնդրութեամբ, գիտութեամբ եւ հաւատարմութեամբ: Բացառիկ սէր ու յարգանք ունի հանդէպ Հայ Եկեղեցիին եւ Հայ Եկեղեցականին որուն իր հնազանդութիւնը այնքան անկեղծօրէն կը յայտնէ իր վստահելի, եւ այս բառը կ'ուզեմ ընդգծել, վստահելի գործակցութեամբը:

Իմ Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ Եկեղեցւոյ հովութեան պաշտօնը ճիշդ այսօր կը լրացնէ իր իններորդ տարին: Ինը տարիներու ընթացքին Կարապետ սարկաւազի ծառայութիւնը բարձրօրէն գնահատած եմ եւ առիթով մըն ալ համայնքը պատուեց զինք: Սակայն իմ ջերմ փափաքն է Սրբազան Հայր որ Դուք Ձեր ներկայութեամբը եւս գնահատէք յանձնելով Կարապետին Օրհնութեան Գիր մը եւ Ս. Վարդան Մայր Տաճարի Մետայլը: Գիտեմ թէ կարճ է ժամանակը, սակայն վստահ եմ որ Դուք եւս պիտի ուզէք այս առիթը շնորհել իրեն: Ձեր հետմիասին կը բերէք, Ղրկելու պէտքը չունիք, երկուքն ալ:

Ընդունեցէք, Սրբազան Հայր, յատուկ շնորհակալութիւններս սոյն խնդրանքիս առիթով: Կը յիշեմ թէ յատուկ հարցարան մը կար նման պարգեւատրութեան մը համար: Ձեզի կը վստահեցնեմ որ եթէ հարկ է զայն կը պատրաստեմ յառաջիկային: Ձերմ սիրով, *James G. Arzoumanian*

ST. SAHAG AND ST. MESROB ARMENIAN CHURCH
630 CLOTHIER ROAD WYNNWOOD, PA. 19096 215-642-4212